ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

Կազմեց՝ Ռազմիկ Օհանյան-ՀՀ ԿԳՄՍՆ ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ
Կազմման հիմքը՝ Պայմանագիր № 33 առ 29.09.2022թ.
Կազմման ամսաթիվը և վայրը 20.01.2023թ., ք. Երևան
Հաշվետու ժամանակաշրջան՝ 2022թ. 2-րդ կիսամյակ

Համաձայն վերոնշյալ պայմանագրի պահանջների, իմ կողմից հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Համապատասխան հանձնարարականների համաձայն, հավաքագրել եմ կատարված աուդիտորական առաջադրանքների հաշվետվությունները, դրանք էլեկտրոնային ձևաչափով փոխանցել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներքին աուդիտի կոմիտեի անդամներին, նրանց կողմից հաշվետվությունների հետ կապված հարցերի վերաբերյալ տվել եմ ներքին աուդիտին վերաբերող անհրաժեշտ մասնագիտական պարզաբանումներ:

2. Կազմակերպել և մասնակցել եմ աուդիտի ենթարկված միավորների պատասխանատուների հետ ներքին աուդիտի հաշվետվությամբ արձանագրված դիտարկումների վերաբերյալ քննարկումներին, անհրաժեշտության դեպքում կատարելով եմ մասնագիտական խնդիրների բացահայտումներ, այդ խնդիրների վերաբերյալ առաջարկել եմ մասնագիտական լուծումներ, ինչպես նաև ապահովել եմ այդ քննարկումների հետ կապված գրագրությունը և ստացված պատասխանների տրամադրումը ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան ստորաբաժանումների պատասխանատուներին:

3. Աջակցել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթները կատարող «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին, ԿԳՄՍ նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստերի նախապատրաստման, անհրաժեշտ փաստաթղթերի շրջանառման և անցկացման հարցերում:

4. Հրավիրված անձի կարգավիճակով մասնակցել եմ ԿԳՄՍ նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստերին, մասնակից դարձել դրանցում ներկայացված հաշվետվությունների քննարկումներին, ինչպես նաև նիստերի ընթացքում բարձրացված՝ ինձ ուղղված հարցադրումներին տվել ներքին աուդիտին վերաբերող անհրաժեշտ մասնագիտական պարզաբանումներ:

5. Համապատասխան հանձնարականների համաձայն կազմել եմ ներքին աուդիտի առաջադրանքների և դրա արդյունքների վերաբերյալ համապատասխան պետական մարմիններին և ՀՀ ԿԳՄՍ նախարարությանն համակարգի աուդիտի միավորներին ուղղված գրություններ, կազմել եմ պետական մարմիններից և ԿԳՄՍ նախարարությանն

համակարգի կազմակերպություններից ԿԳՄՍ նախարարությանն ուղղված՝ ներքին աուդիտին առնչվող գրությունների մասնագիտական պատասխաններ:

6. ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներքին աուդիտի 2023-25թթ. ռազմավարական և 2023թ. տարեկան ծրագրերի կազմման նպատակով, ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված ներքին աուդիտի կանոնակարգով սահմանված կարգով և ձևաչափով, աջակցել եմ ներքին աուդիտի ենթակա՝ նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներից, համակարգի կոմիտեներից, կազմակերպություններից (ՓԲԸ-ներ, ՊՈԱԿ-ները) հիմնադրամներից, ԾԻԳ-ից գրավոր հավաքագրմանը, և սահմանված ընթացակարգով ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթները կատարող «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին եմ փոխանցել ՀՀ ԿԳՄՍ նախարարության համակարգի ներքին աուդիտի ենթակա միավորների ռիսկերի տեղեկագրերը:

«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի պատասխանատուների հետ մասնակցել եմ վերոնշյալ ծրագրերի նախագծերի մշակման և կազմման նպատակով ներկայացված ռիսկերի գնահատման վերլուծելության և գնահատման աշխատանքներին, վերջինիս փոխանցելով միավորների նախանշման, ռիսկերի գնահատման համար անհրաժեշտ ՀՀ ԿԳՄՍ նախարարի և ներքին աուդիտի կոմիտեի կողմից մատնանշված խնդիրները, դիրքորոշումներն ու գերակայությունները:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներքին աուդիտի կոմիտեում քննարկման արդյունքներով այդ ծրագրերը հաստատվել են ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթները կատարող «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից՝ վավերացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից:

Հաստատված և վավերացված վերոնշյալ ծրագրերը ներառվել են ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթները կատարողի 2023թ. ընտրության նպատակով իմ կողմից կազմված 2023թ. տեխնիկական բնութագրում և հանդիսացել են ներքին աուդիտի ծառայությունների գնման հայտի մասը:

7. ՀՀ ԿԳՄՍ նախարարության կարիքների համար ներքին աուդիտ ծատռայությունների գնման նպատակով, ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթները կատարողի գնման գործընթացի կազմակերպման կարգին համապատասխան, հայտը նախագծողի պարտականությամբ, ընդգրկվել եմ պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված մասնագիտական խումբի (պատասխանատու ստորաբաժանման), ինչպես նաև գնահատող հանձնաժողովի կազմերում, կատարելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների համար նախատեսված գործառույթները:

Հաշվետու ժամանակաշրջանում, որպես հայտ նախագծած պատասխանատու ստորաբաժանման աշխատակից, ներքին աուդիտի ծառայությունների 2022թ. տեխնիկական բնությագրով սահմանված ընթացակարգի համաձայն գնահատել և ընդունել եմ ծառայությունները մատուցողի կողմից ներկայացված ծառայությունների կատարողական ակտերը:

8. ՀՀ ԿԳՄՍ նախարարի և նախարարության գլխավոր քարտուղարի որոշումներով և հանձնարարականներով, ընդգրկվելով նախարարության ենթակայության կազմակերպություններում ուսումնասիրություններ կատարող աշխատանքային խմբերում, կատարել եմ պետական բյուջեի ծրագրերով ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը տրամադրված հատկացումների շրջանակներում համակարգի կազմակերպությունների ծախսերի և եկամուտների վերաբերյալ վերլուծություններ ու ուսումնասիրություններ, որոնց հետ կապված մասնակցել եմ առանձի հաշվետվությունների և (կամ) զեկուցագրերի կազմման և ներկայացման աշխատանքներին:

ՌԱԶՄԻԿ ՕՀԱՆՅԱՆ

20.01.2023թ.